

ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ-ՂԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Ս. Ա. ՇՏԻԿՑԱՆ

Ստեփանն Ոսկանյանի անունը «Արշալույս արարատյանում» սկսում է հանդես գալ 1843 թ. սկզբներից, երբ նա 18 տարեկան էր և գտնվում էր Զմյուռնիայի հանրահայտ Մեսրոպյան վարժարանի ավարտական դասարանում: Սկսելով «Արշալույս արարատյանի» հրատարակությունը (1840 թ. օդոստոս) խմբագիր Ղուկաս Պալազարյանը սկզբից իսկ մշակել էր բավականին խելացի մի վարձագիծ, որն անփոփոխ կիրառեց իր ամբողջ խմբագրապետություն» տարիներին և որը հաջողությամբ արդարացնում էր իրեն: Նա պարբերաբար իր ամսագրում տեղ էր տալիս թե՛ Մեսրոպյան արական և թե՛ Սարգսյան (հետագայում՝ Հռիփսիմյան) իգական դպրոցի բարձր դասարանների աշակերտ-աշակերտուհիների ինչպես ինքնուրույն, այնպես էլ, մանավանդ, թարգմանական բնույթի գործերին, նախ նրանց խրախուսելու, գիրգրականության հանդեպ նրանց մոտ սեր առաջացնելու և ապա իր պարբերականի «Բանասիրական» բաժնի նյութերն անպակաս անելու համար: Եվ սկսած «Արշալույս արարատյանի» առաջին իսկ համարներից, իրար են հաջորդում ամենատարբեր բնույթի ու բովանդակության արձակ և չափածո այլևայլ թարգմանություններ՝ հունարեն, իտալերեն, ֆրանսերեն ու անգլերեն բնագրերից, կատարված գերազանցապես վերահիշյալ երկու վարժարանների աշակերտության ուժերով: Մի բան, որը հետագայում ընդօրինակեցին պուսահայ պարբերականներից շատերը:

1843 թ. հունվարի առաջին համարում, «Արշալույս արարատյանը» հրատարակում է «Կիրակի օր, անգղիացի պատերազմական նավի մը մեջ» ակնարկը, որն ունի «թարգմանեացի ի գաղղիականն Ստեփանն Ոսկանյան, յաշակերտաց վարժարանիս» նշումը: Եթե ըմոռանանք, որ այդ ժամանակ նա 18 տարեկան էր, իսկ ավելի վաղ՝ 17 կամ 16 տարեկան հասակում հազիվ թե նա տպագրվելու մասին մտածեր, ապա կարելի կլինի որոշակիորեն պնդել, որ վերահիշյալ թարգմանությունը Ոսկանյանի թերևս գրական առաջին տպագիր աշխատանքն է:

Առաջին թարգմանությունը շուտով հաջորդում է «Զինացոց թաղման արարողությունը» ակնարկը և «Արտառոց պատմություն մը» պատմվածքը՝ թարգմանված դարձյալ ֆրանսերենից, և Մեսրոպյան վարժարանի ավարտական դասարանի աշակերտն արդեն լուրջ խոսակցություն է բացում իր մասին: Նրա անունը մշտապես հիշատակվում է լավագույն սովորողների թվում, տարբեր առիթներով նրան դրվատաճառի խոսքեր է ուղղում «Արշալույս արարատյանը», իր սանիկի մասին շթաքցված հպարտությամբ էր խոսում վարժարանի տեսուչը՝ Ռուբեն Անդրեաս Փափազյանը: «Հորաքույրս, — այս առիթով իր հուշերում գրում էր Մ. Մամուրյանը, — օր մ'եկավ ինձ ըսավ. տղաս, գիտեմ տրտում ես, գիտեմ տրտմած ես, բայց հոգ մի ընե՛ր: ...եթե տարի մը լավ աշ-

խատիս, վերի սրահը, մեծերուն մոտ, Ոսկանյան՝ գրող, կարդացող, երևելի Ոսկանյանի գտնված սրահը պիտի ելնես, կիմանա՞ս»¹:

Իր աշակերտների մոտ առավել ջանասիրություն արթնացնելու և լեզուների տիրապետման հարցում նրանց օգնելու նպատակով Ռուբեն Անդրեաս Փափազյանը նախաձեռնում է ստեղծել մի ընկերություն, հիմնականում բաղկացած Մեսրոպյան վարժարանի բարձր դասարանի աշակերտներից, որոնք պետք է ղրաղվեին եվրոպական լեզուներից զանազան գործեր թարգմանելու աշխատանքներով: Իր հերթին Ղուկաս Պալազարյանը իսկույն կարողացավ կոահել այդպիսի ընկերության օգտակարությունն իր թերթի համար՝ իրեն անընդմիջաբար թարգմանություններ մատակարարելու իմաստով, և ոչ միայն գործունյա մասնակցություն բերեց նրա ստեղծման աշխատանքներին, այլև տվեց իր համաձայնությունը՝ ընկերության անդամների թարգմանությունները (իհարկե ավագների որոշ ուղղումներից ու շտկումներից հետո) իր պարբերականում հրատարակելու: Թե որքան ժամանակ են տևել ընկերության հետ կապված ներքին՝ կազմակերպչական աշխատանքները կամ ինչ ձևով են ընթացել դրանք, հայտնի չէ. այսքանը գիտենք միայն, որ 1843 թ. սկզբներից այն արդեն գոյություն ուներ. «Բերկրառիթ սրտիվ կփութանք ծանուցանել, — գրում է «Արշալույս արարատյանը», — թե քաղբիս սուրբ Մեսրոպյան վարժարանին առաջադեմ աշակերտներեն քանի մը հոգի, ազգասիրական և ուսումնասիրական գովելի ոգիե մը շարժվելով ու քիչ տարվան մեջ այլևայլ քաղբուները հաստատված ուսումնական հայազգի ընկերությանց վրա նախանձահույզ ըլլալով, միաբանություն մը հաստատեք են մեջերսին Հայկազնյանը՝ բնկերության անունով, որուն նպատակը ուրիշ բան չէ, բայց միայն եվրոպական այլևայլ լեզուներից հայերեն թարգմանել ազգօգուտ, բարոյական և զվարճալի անմեղ գրքեր, ու ընկերության ծախքովը տպել տալ: Հիմակուհիմա աս ընկերությունը յոթը անգամ ունի, որոց մեծագույն մասին հավանություններ ուրիշ ընկերակիցներ ալ կընդունի սիրով. հերիք է, որ անգամ գրվողները ազգասեր և ուսումնասեր ըլլան և քիչ շատ եվրոպական լեզվի մը տեղեկություն ունենան»²:

Դժվար չէ հասկանալ, որ Ոսկանյանը պետք է լիներ այդ ընկերության եռանդուն անդամներից մեկը: Եվ այդպես էլ եղավ. բավական է ասել միայն, որ իր չափածո և արձակ ստեղծագործություններով, ֆրանսերենից և իտալերենից կատարված գեղարվեստական գործերի իր թարգմանություններով, որոնց մասին կիսովի, Ոսկանյանը «Արշալույս արարատյանում» սկսում է հանդես գալ հենց 1843 թ. սկզբներից:

Եվ այսպես, ուսումնառության ընթացքում արդեն անուն հանած, քաղաքի պարբերական մամուլում տպագրվել սկսած, «Հայկազնյան ընկերության» գործունեության մեջ իր ծանրակշիռ բաժինն ունեցող Ստեփան Ոսկանյանը 1843 թ. վերջերին դառնում է Մեսրոպյան վարժարանի «ուսումնավարտ» (շրջանավարտ): Ինքնըստինքյան հասկանալի է, որ վարժարանի հոգաբարձությունը և անձամբ ինքը՝ վերատեսուչ Ռուբեն Անդրեաս Փափազյանը ձեռքից բաց չէին թողնելու նրան: Չմոռանանք, որ Մեսրոպյան վարժարանի վերելքի տարիներ էին սրանք, երբ աշակերտների թիվն անց էր 250-ից, և, հետևա-

¹ «Արևելյան մամուլ», 1898, № 22:

² «Արշալույս արարատյան», 1843, № 151:

բար, դպրոցը բանիմաց ուսուցիչների խիստ կարիք ունեւր, սկսել էր եռանդուն գործունեութիւն ծավալել աղջիկների Սարգսյան վարժարանը, որն արդեն 150 աշակերտուհի ունեւր և դարձյալ գրագետ ուսուցիչների հայտ էր ներկայացնում, Մեսրոպյան վարժարանն ունեւր իր սեփական տպարանը (1840 թ.) և հետևաբար այստեղ էլ անհրաժեշտ էին ձեռնհաս ուժեր հոգ տանելու ինչպես տպարանի, այնպես էլ նրա հրատարակութիւնների վերաբերյալ: Ոսկանյանը մտնում է Մեսրոպյան վարժարանում որպէս ֆրանսերենի, իսկ մի որոշ ժամանակ անց՝ նաև հայերենի «օգնական վարժապետ»: Դրա համար նա լրացուցիչ գումար մոծեւելով դպրոցի «դրամական սնտուկին», կցվում է այն ուսուցիչներին, որոնց մոտ անհրաժեշտ էր մի որոշ ժամանակ էլ «կատարելագործվել» և, միաժամանակ, նրանց հսկողութիւնն ներքո և նրանց օժանդակութեամբ դասեր էր տալիս համեմատաբար ցածր դասարաններում:

Իհարկե, առաջին պլանի վրա մտնում էր գրական-թարգմանչական գործունեութիւնը: Վերևում հիշատակված թարգմանական բնույթի գործերից հետո, Ոսկանյանին նորից հանդիպում ենք 1844 թ. սկզբներին և այս հանդիպումը արդեն վճռական նշանակութիւն ունի նրա գրչին պատկանող նորանոր ստեղծագործութիւնների բացահայտման հարցում: 1844 թ. հունվարին, Մեսրոպյան վարժարանը կատարում է աշակերտների տարեկան հարցաքննութիւնն ու պարզաբար շխտութիւնը նվիրված հերթական հանդիսութիւնը: Տալով այդ հանդիսութիւնն նկարագրութիւնը, «Արշալույս արարատյանը» անում է հետևյալ, մեզ համար շատ կարևոր հավելումը. «Վարձատրութիւնն հանդեսին սկիզբը սուրբ Մեսրոպյան դպրոցին երևելի վարժապետներեն՝ պատվելի պարոն Ռուրեն Անդրեաս Փափազյանը հետևյալ ճառը կարդաց (բերվում է Փափազյանի ընդարձակ ճառը—Ս. Շ.): Անկե ետքը դպրատան օգնական վարժապետ, ուսումնական պարոն Հայկ Ստեփան Ոսկանյանը ի նվեր Սյունյաց ընկերութիւնը ոտանավոր մը կարդաց, որն որ նմանապէս հրատարակելու արժան համարեցանք»³:

Հիշյալ Հայկ Ստեփան Ոսկանյանը մեզ հետաքրքրող Ստեփան Ոսկանյանն է, Նթե անգամ նկատի չունենանք մեջբերման մեջ եղած փաստերը, բավական է ասել միայն, որ 1859 թ. Փարիզում հրատարակվող «Արևմուտք» երկշաբաթաթերթը, որն, ինչպէս հայտնի է, հրատարակում էր Ստեփան Ոսկանյանը, ունեւր «Արձագանգ Եվրոպայի լուսավորութիւնն» ենթավերնագիրը, իսկ վերջում՝ «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան» նշումը, որը նույն Հայկ Ստեփան Ոսկանյանի կրճատված ձևն է: Առաջիկայում կտեսնենք, որ Ստեփան Ոսկանյանին այդ ձևով, երբեմն էլ նույնիսկ Հայկ Ոսկանյան հորջորջումով էր կոչում, և այն էլ մի քանի առիթներով, «Արշալույս արարատյանը»:

Մինչև այս ճշգրտումից բխող կարևոր եզրակացութիւններին անցնելը, պարզաբանենք մի հարց. որտեղից է դալիս երկու անուն օգտագործելու՝ առաջին հայացքից տարօրինակ այս սովորութիւնը Պոլսի և հատկապէս Զմյուռնիայի մեր հայ մտավորականութիւնն մոտ, որը ծայր առնելով XIX դ. սկզբներից, ընդհանուր առմամբ տևում է մինչև այդ դարի 80-ական թվականները:

XIX դ. հայ ժողովուրդը, մանավանդ նրա արևմտյան հատվածը, սկսեց հաղորդակից լինել եվրոպական և մասնավորապէս ֆրանսիական մշակութիւն:

³ «Արշալույս արարատյան», 1844, № 176.

Սվրոպական իրականության պայմաններում լայնորեն տարածված էր, որոշ դիրքի ու ճանաչման հասնելուց հետո, սեփական անվան կողքին երկրորդ՝ «հարգական» անունն ավելացնելու կարգը, մի անուն, որի օգնությամբ ասես ավելի էր ընդգծվում տվյալ անձնավորության հասարակական հեղինակությունը: Այսպես, օրինակ, Հեգելը, երբ դեռ ուսանում էր իր հայրենի Շտուտգարաում, կոչվում էր սովորական՝ Վիլհելմ Հեգել: Մի քանի տարի անց, երբ նա արդեն արել էր իր առաջին քայլերը փիլիսոփայության բնագավառում, սկսեց կոչվել Գեորգ-Վիլհելմ Հեգել: Նույն պատճառաբանությամբ էլ՝ Ալֆոնս Լամարթինն սկսեց կոչվել Ալֆոնս-Մարի Լամարթին, Ռընե Շատոբրիանը՝ Ֆրանսուա-Ռընե Շատոբրիան, Ալեն Լեսաժը՝ Ալեն-Ռընե Լեսաժ, Հիպոլիտ Տենը՝ Հիպոլիտ Ադոլֆ Տեն և այլն:

Սվրոպական այս սովորույթն էլ, ահա, իր համապատասխան տեսական պատճառաբանությամբ ժառանգեցին XIX դ. արևմտահայ մեր մտավորականները և առանց մնացորդի ներդրեցին կյանքում: Այսպես, օրինակ, Մեսրոպյան դպրոցում նոր տեղավորված և դեռևս անանուն ու անհայտ Փափաղյանը սկզբում կոչվում էր Անդրեաս Փափաղյան, երբեմն էլ՝ Անդրեաս վարժապետ: Բայց հետագայում, երբ նրան վստահվեցին Մեսրոպյան վարժարանի ընդհանուր վերատեսչի դժվարին պարտականությունները, սկսեց կոչվել Ռուբեն Անդրեաս Փափաղյան, և «Արշալույս արարատյանում» հրատարակվող իր հոդվածներն ու թարգմանություններն էլ նա ստորագրում էր «Ռ. Ա. Փ.»: Գրիգոր Կոստանդյանի երկրորդ որդին՝ Գալուստ Կոստանդյանը, հասարակական որոշ դիրք ձեռք բերելուց հետո, սկսեց կոչվել Արամ-Գալուստ Կոստանդյան և այդպես էլ («Ա. Գ. Կ.» կամ «Ա. Գ. Գ. Կ.») ստորագրում էր իր հոդվածները: Այս օրինակափոխության թելադրությամբ էլ՝ Գարեգին Տատյանը շուտով դարձավ Հարություն-Գարեգին Տատյան, Տիգրան Սավալանյանը՝ Տիգրան հայրապետ Սավալանյան, Գարեգին Սրվանձտյանը՝ Հովհաննես (Յոհաննէս) Գարեգին Սրվանձտյան և այլն:

Ոսկանյանը այս սովորությունից բացառություն չկազմեց: Նա, շնայած իր երիտասարդ տարիքին, 1844 թ. սկզբներից ներկայացավ նոր՝ Հայկ Ստեփան Ոսկանյան անվամբ:

Բանասիրական այս ճշգրտումը ամենևին էլ երկրորդական չէ, որովհետև սկսած 1844 թ. սկզբներից մինչև 1846 թ. կեսերը, այսինքն՝ մինչև Ոսկանյանի Փարիզ մեկնելը, «Արշալույս արարատյանը» ավել կամ պակաս հաճախակիությամբ հրատարակում է վերջինիս ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական շափածո և արձակ ստեղծագործությունները, որոնք, սակայն, ունեն «Հայկ Ս. Ոսկանյան» կամ «Հ. Ս. Ոսկանյան», կամ «Հ. Ս. Ո.» և անգամ «Հ. Ս.» ստորագրությունները, և որոնք առ այսօր վրիպել են ուսումնասիրողների ուշադրությունից: Մինչդեռ շուրջ քսանհինգ անունի հասնող և խիստ հետաքրքրական գրական այդ ժառանգության ըստ ամենայնի ուսումնասիրությունը միանգամայն յուրովի է ներկայացնում նրանց հեղինակին և լրացնում ու ամբողջացնում է նրա անցած ստեղծագործական ուղին:

1844 թ. Ոսկանյանի կյանքում նշանավորվեց նոր և ըստ ամենայնի ուշադրավ առաջընթացով: Նույն թվականի հուլիսին, «Արշալույս արարատյանը» իր ընթերցողներին ներկայացրեց հետևյալ տեղեկությունը. «Պարտ կհամարենք մեզի հրատարակել այսօր «Սյունյաց ընկերության» հիմնական խորհրդակալական անդամոց անունները, որոնք տասնվեց հոգի են, որոնցմե մեկը

հոգաբարձու և մեկը գանձապետ ընտրված է», Հրատարակելով այդ 16 անձանց անունները և նշելով, որ ընկերության հոգաբարձուի պարտականությունները վարում է Ղուկաս Պալղազարյանը, թերթն անում է հետևյալ հավելումը. «Այլև ընկերության կառավարությանը քարտուղար անվանվեցավ պարոն Հայկ Ստեփան Ոսկանյանը»⁴:

Ասվածը Հայկ Ստեփան Ոսկանյանի և մեզ հետաքրքրող Ստեփան Ոսկանյանի նույնության փաստը հավաստելուց բացի, բացահայտում է Ոսկանյանի խաղացած հասարակական-քաղաքական դերը Ձմյուռնիայի հայկական համայնքի կյանքում:

Այս տրամադրության թելադրանքով էլ «Սյունյաց ընկերությունը», որ ստեղծվեց 1841 թ. հունիսին, Ղուկաս Պալղազարյանի, Գրիգոր Կոստանդյանի, Ռուբեն-Անդրեաս Փափազյանի և զմյուռնահայ ուրիշ նշանավոր անձանց նախաձեռնությամբ, հասարակական կազմակերպություն էր, աորուն նպատակը ուրիշ բան չէ, բայց միայն հայոց ազդին ուսումնական ու բարոյական առաջադիմությունը օգնել ըստ կարի»⁵:

Սկզբնական շրջանում «Սյունյաց ընկերության» գործունեությունը բավական սահմանափակ էր, նա ֆինանսավորում էր քաղաքի Մեսրոպյան արական և Սարգսյան իգական վարժարանները և Մեսրոպյան վարժարանի շենքում 1840 թ. հիմնադրված հայալեզու տպարանը: Սակայն, շանցած երկու տարի, «Սյունյաց ընկերությունը» աստիճանաբար ու հիմնավորապես իր ձեռքը վերցրեց իզմիրահայության ամբողջ գրական-մշակութային կյանքը: Նախ՝ իր ուժերով ու միջոցներով նա կարողացավ 1—3 ուսուցիչ ունեցող հայկական դպրոցներ բանալ Չանաք-կալեում, Այտրնում, Մենեմենում, Պայանտրում ու Մանիսայում, իսկ մեկ տարի անց, 1844 թ. համանման դպրոցներ բացվեցին նաև Նազիլիում և Պանտրմայում: Այսպիսով, Այտրնի վիլայեթում քիչ թե շատ աչքի ընկնող հայաբնակ բոլոր բնակավայրերն ունեցան իրենց սեփական հայկական դպրոցները: Այս շրջանից էլ սկսվեցին հայերեն լեզվով լույս տեսնող բոլոր հրատարակությունների (պարբերականներ, դասագրքեր, գեղարվեստական ստեղծագործություններ) վրա հսկողություն սահմանելու և համապատասխան ուղղություն ցույց տալու բարդ և բազմաբնույթ աշխատանքները: Մրան էլ հաջորդեց թարգմանական բնույթի գիտա-գեղարվեստական ստեղծագործությունների խրախուսման, անհրաժեշտության դեպքում՝ վարձատրման (1834 թ. ընկերությունը շուրջ 46,5 հազար դուրուշ անշարժ դրամագույն ուներ) հետ կապված լայնածավալ գործունեություն: Այս բոլորի հետևանքով «Սյունյաց ընկերություն» անունը շատ շուտով տարածվեց բոլոր հայաշատ վայրերում, որտեղից ընկերությունը նույնպես դրամական և նյութական օգնություն էր ստանում: Բավական է ասել միայն, որ 1844—1845 թթ. ընկերությունը Ձմյուռնիայից բացի, բաժանորդներ ուներ Տրիեստում, Վիեննայում, Բաղդադում, Բամբեյում, Մագրասում, Կահիրեում, Թավրիզում, Ալեքսանդրիայում, Բասրայում, Լոնդոնում և էլի ուրիշ քաղաքներում. բաժանորդներ, որոնք ոչ միայն ամեն մի առիթով պատրաստ էին օգնել (և օգնում

⁴ Նույն տեղում, № 197: Այս և Ոսկանյանի հետ առնչվող մի քանի ուրիշ տեղեկություններ մեզ հաղորդել է պ. Արտաշես Գարտաշյանը (Փարիզ), որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

⁵ «Արշալույս արարատյան», 1841, № 38:

էին) «Սյունյաց ընկերությանը», այլև հանդիսանում էին նրա գործի ջատագովներն ու տարածողները: Եվ եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ ընկերությունը իր կազմում ուներ արտասահմանյան պատվավոր անդամների պատկառելի մի խումբ, հիմնականում ֆրանսիացիներ, անգլիացիներ ու իտալացիներ, որոնք նույնպես անհրաժեշտության դեպքում չէին զլանում ցույց տալ իրենց օգնությունը, ապա, զոնե ընդհանուր գծերով պարզ կդառնա այն ընկերության ներքին բովանդակությունը, որի, այժմյան տերմինով ասած, գիտական քարտուղարի պարտականությունները վստահված էր Ստեփան Ոսկանյանին:

Քիչ տեղեկություններ ունենք այն մասին, թե կոնկրետ ի՞նչ գործունեություն էր ծավալում Ոսկանյանը, սակայն եղած կցկտուր փաստերը ընդհանուր գաղափար կազմելու հնարավորություն տալիս են: Նա մի քանի լեզուներով վարում էր ընկերության ընդարձակածավալ նամակագրությունը, «Հայկազնյան ընկերության» միջոցով կազմակերպվում էր ինքնուրույն և թարգմանական նյութերի անընդմեջ մատակարարումը «Արշալույս արարատյանին», «հետեւություն կրներ» Մեսրոպյան վարժարանի տպարանից լույս տեսնող գրքերին և այլն: Ինչպես տեսնում ենք՝ աշխատանքի պակասությունից նորընտիր գիտական քարտուղարը դժգոհելու հիմք չունեի, իսկ քանի որ «Սյունյաց ընկերության» աշխատանքների մասին, ընդհուպ մինչև 1846 թ. կեսերը, այսինքն՝ մինչև Ոսկանյանի Փարիզ մեկնելը «Արշալույս արարատյանը» մշտապես խոսում էր գովասանքով, ուստի դրանից պետք է եզրակացնել, որ իր ամբողջ գիտելիքներն ու կազմակերպչական կարողությունները Ոսկանյանը ներդրել էր իրեն վստահված գործում:

1844 թ. մի այլ կարևոր հանգամանք էլ արձանագրեց Ոսկանյանի կյանքում: Իր Առաքել և Նուպար որդիների հետ մեկտեղ, մոտ մի տարի առաջ, Ջմյուռնիա էր վերադարձել Մկրտիչ Նուպարյանը (վերջիններս մոր կողմից ազգակցական կապեր ունեին Ոսկանյանի հետ): Նա կամենում էր իր որդիներին ուսման տալ Մեսրոպյան վարժարանում, իսկ ինքը որոշել էր որոշ դրամագլուխ կուտակել առևտրական գործունեություն սկսելով: Ջմոռանանք, որ այդ թվականներին դեռ չկար Սուեզի ջրանցքը և Մերձավոր ու Միջին Արևելքի ամբողջ առևտուրը կատարվում էր հիմնականում Ջմյուռնիայով, մի բան, որը հարցստանալու հրաշալի պայմաններ էր ստեղծում գործունյա զմյուռնիահայություն համար: Սակայն որդիներին Մեսրոպյան վարժարան տեղավորելու հարցում ծայր առավ շնախատեսված մի դժվարություն: Նուպարյանների ընտանիքը ֆրանսախոս էր, հայերեն գրեթե չիմանալու չափ, և այս հանգամանքը մեծ բարդությունների տեղիք էր տալիս ամբողջ էությունը հայկական թեքում ունեցող Մեսրոպյան վարժարանում: Դժվար է ասել, թե ինչ հետևանք կունենար դեպքերի ընթացքը, եթե գործին չմիջամտեր Ոսկանյանը: Չնայած իր ծանրաբեռնվածությունը, նա համաձայնվում է հայերեն պարապել Նուպար և Առաքել Նուպարյանների հետ, պայմանով, որ վերջիններս էլ օգնեն իրեն՝ ֆրանսերենի բնագավառում իր գիտելիքների թերին լրացնելու համար: Մի պայման, որը լիովի բավարարում էր երկու կողմերին էլ և, որոնք գովելի բժախնդրությունը իրականացրեցին իրենց պայմանավորվածությունը շուրջ երկու տարի: «Իր ազգականներեն Մկրտիչ Նուպարյանի զավակները, — գրում է Ջարդարյանը, — Նուպար և Առաքել երբ Իզմիր կուզան, Ոսկանյան կսկսի անոնց հայերենի դաս տալ, որովհետև անոնք զարգացած ըլլալով հանդերձ,

հայերեն չէին գիտեր, թեև քաջ ֆրանսագետներ էին: Անոնցմե անգրանիկը Նուպար՝ որ Ծգիպտոսի նախարարապետը պիտի ըլլար հետո, քիչ ժամանակ մնալով Կահիրե կերթաւ: Իսկ Առաքել խնամքով կուսումնասիրե հայերենը՝ աշակերտելով Ոսկանի, որուն փոխադարձաբար ֆրանսերեն կղասախոսե ինք»⁶,

Այսպես ուրեմն, ֆրանսերեն, իսկ փոքր-ինչ անց նաև հայերեն լեզվի դասեր Մեսրոպյան վարժարանում, կայուն հետևողականությամբ շարունակվող պարապմունքներ Առաքել և Նուպար Նուպարյանների հետ, ծանրակշիռ փայլաբաժին «Հայկազնյան ընկերության» գործի ու գործունեության մեջ և «կառավարության քարտուղարի» խստիվ աշխատատար գործունեություն «Սյունյաց ընկերության» կազմում: Աշխատանքային բնութագրի առումով խիստ աշխատատար մի գործունեություն էր դա:

Այս բոլորն ամբողջանում ու լրանում էր գրական-թարգմանչական ոչ պակաս եռանդալից գործունեությամբ: «Արշալույս արարատյանի» էջերում զարմացնելու շափ արգասավորությամբ, Ոսկանյանն սկսում է հրատարակել իր բանաստեղծությունները, արձակ գեղարվեստական ստեղծագործությունները, պոեմը, ֆրանսերենից և իտալերենից կատարվող շափածո և արձակ թարգմանությունները⁷:

Եթե մի հայացք նետենք դարասկզբի արևմտահայ գեղարվեստական գրականության վրա, ապա կնկատենք, որ այն, ընդհանուր առմամբ և իզմիրահայ գեղարվեստական գրականությունը, զարգացման երկու աստիճան է անցել. մինչև Հովհաննես Վանանդեցու հանրահայտ եռագրության հանգստ գալը և դրանից հետո: Առաջին շրջանում, ուղեցույց ունենալով Մխիթար Սեբաստացու հանրահայտ տեսությունը, որ գեղարվեստական ստեղծագործությունը և մանավանդ բանաստեղծությունը ուղեղը հանգստացնելու միջոց է, մի տեսակ ուրախ ժամանց, իզմիրահայ գրողները ստեղծագործում էին հենց այդ տրամադրության թելադրությամբ: Պարբերականներում զանգվածաբար հրատարակվում էին, օրինակ, «Այրահավաք» բանաստեղծություններ, այսինքն՝

⁶ Զ. Զարդարյան, Հիշատակարան, Պոլիս, 1910, էջ 145:

⁷ Ահա դրանցից մի քանիսը, համապատասխան փոքրիկ մեկնարանումներով. «Բարուն» (Արշալույս արարատյան, 1844, № 189), գրաբար գողտրիկ բանաստեղծություն է, որտեղ գովերգվում է գարունն ու նրա հմայքները: «Աղքատ գինեզեն» (նույն տեղում, № 199), Լամարթինի համանուն բանաստեղծության՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանություն է, որտեղ պատկերված է գինովցած աղքատը, որը տուն է վերադառնում, «Կինն ինչ թագուհի, որդիքն են իշխան» կարծելով: «Ճպուտ և մրջին» (նույն տեղում, № 204) և «Գորտն որ շանս գլխի զեզն մեծութեամբ» (նույն տեղում, № 226). Լաֆոնտենի հանրահայտ առակներն են, գրաբար թարգմանված, ֆրանսերեն բնագրից: «Առ քաջն Վարդան» (նույն տեղում, 1845 թ., № 227). արձակ բանաստեղծություն է, գրված գրաբարով և նկարագրում է Վարդան Մամիկոնյանի հայտնի հերոսամարտը և նորերի՝ վարդանական ազատասիրության ոգով դաստիարակվելն ու զարգանալը: «Բարեկեցիկ աուրք» (նույն տեղում), Ոսկանյանի առաջին և միակ գրաբար պոեմը, որտեղ երկու վիճող կողմերից մեկի՝ «Ժիրի» բերանով, հեղինակը դրվատում է դպրոցը, ուսումը և նրանց գերը մարդու ձևավորվելու գործում: «Կաղնի և եղեգն» (նույն տեղում, № 234). Լաֆոնտենի հանրահայտ առակն է ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ: «Ամառն» (նույն տեղում, № 236). ամռանն ու նրա բարեմասնություններին նվիրված գրաբար բանաստեղծություն է, որն ավարտվում է պատանիներին ուղղված բարոյա-գաստիարակչական խրատով: «Տերև հողմավար» (նույն տեղում, № 247). ֆրանսիացի բանաստեղծ Անտուան Անտյի՝ մայր ծառից պոկված և անողոք քամու ձեռքին խաղալիք դարձած տերևի մասին գրված բանաստեղծության՝ բնագրից կատարված գրաբար թարգմանություն է և այլն:

այնպիսիներ, որոնց տողերը կազմող բացարձակապես բոլոր բառերը պետք է մեկ կամ մի քանի «Ա» տառ ունենային⁸։ Դրանց ի պատասխան գրվում էին «Անայբ» բանաստեղծություններ, որոնց համար ընտրված բառերից և ոչ մեկը իր մեջ «Ա» տառ չունեն⁹։ Լայնորեն տարածված էին «Այբակապ» (ընտրված բառերը պետք է սկսվեին «Ա» տառով), «Բենակապ» (ընտրված բառերը պետք է սկսվեին «Բ»-ով), «Գիմակապ» և այլ՝ նման սկզբունքով գրվող բանաստեղծությունները, ըստ որում այդ բնագավառում իրենց հրատուրությունն ու կարողությունները դրսևորելու «գիտական» փառասիրությունից ելնելով, դարասկզբի բանաստեղծները աշխատում էին «կապելու» համար հատկապես ընտրել այնպիսի տառեր, որոնցով սկսվող բառերը հայոց լեզվում առանձնապես փոքրաքանակ էին¹⁰, էլ շենք խոսում ակրոստիքոսային կամ նույնահանգ բանաստեղծությունների ու պոեմների մասին, որոնք անթիվ ու անհամար էին։ Հասկանալի է, որ այսպիսի բանաստեղծություններում, որոնց էությունը բառախաղն էր և համապատասխան բառեր որսալը, արդեն խոսք չէր կարող լինել ներքին գաղափարական բովանդակության, ժողովրդին «սրտի խոսք» ասելու կամ բանաստեղծությունների միջոցով նրան որևէ նպատակի կոչելու մասին։

Վանանդեցիին եկավ սթափիչ հարված հասցնելու գրական այս բոլոր շաղ-փաղփանքներին։ 1836 թ. Պոլսում հրատարակված նրա «Արփիական Հայաստանի» և 1841 թ. Զմյուռնիայում հրատարակված «Ոսկի դար Հայաստանի» շափածո վիպասանությունները նախ՝ գրական անդաստան բերեցին նոր թեմատիկա՝ հայ ժողովրդի պատմական հերոսական անցյալն ու այդ անցյալի փառքը կազմող ազգային մեծությունները (Հայկ Նահապետ, Վարդան Մամիկոնյան, Նղիշե և այլն) և ապա վերջակետ դրեցին բանաստեղծելու այն ձևերին, որի մասին խոսեցինք։ Ամեն ինչ ամբողջացվեց ու լրացվեց երրորդ՝ «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» շափածո վիպասանությամբ, որը լույս տեսավ հետմահու, 1856 թ. Զմյուռնիայում։

Այսպիսին էր, համառոտակի, արևմտահայ գեղարվեստական գրականության անցած ուղին մինչև Հովհաննես Վանանդեցիին ու Վանանդեցուց հետո։ Եվ երբ այս տեսանկյունից քննում ենք Ոսկանյանի ամբողջ ստեղծագործությունը, ապա նկատում ենք, որ նա սկզբից իսկ կարողացավ խուլս տալ գրական այն ծեծծեքումներից, որոնցով այնպես հարուստ էր իզմիրահայ գրական մթնոլորտը, և որի թելադրած սկզբունքներով ստեղծագործում էին հենց իր դասընկերներից շատերը։ Վճռական դերն այստեղ պատկանում էր Վանանդեցուն, որը ոչ միայն որոշակի դրական ազդեցություն ուներ Ոսկանյան-ստեղծագործողի վրա, այլև զգալի դեր խաղաց նրա՝ որպես արձակագիր ու բանաստեղծ ձևավորվելու գործում։ Ավելին. Ոսկանյանը ոչ միայն հաջողությամբ խուսափեց ժամանակին տարածված գրական այլևայլ խոչ ու խուլթերից, այլև գեղարվեստական իր գործերով առաջ քաշեց «մանկտիների» դաստիարակության հետ առնչվող կարևոր խնդիրներ՝ դպրոցական կրթության ժամանակ ազգային տարրը շեշտելու, երեխաներին բնության մեջ ու բնության միջոցով դաստիարակելու, գեղարվեստական ստեղծագործության հիմնական թեման

⁸ «Արփի արարատյան», 1855, № 8։

⁹ Նույն տեղում, № 9։

¹⁰ Նույն տեղում, № 10։

հայրենիքն ու ազգային սրբությունները դարձնելու հարցերը. հարցեր, որոնք հետագայում պետք է կազմեն հայկական լուսավորական գաղափարաբանության հիմքն ու ակունքը:

Այո, լավ էր սկսել իր գործունեությունը Ստեփան Ոսկանյանը: Այս գովելի սկիզբը, սակայն, կտրուկ կերպով փոխվեց 1845 թ. կեսերից, երբ նույն թվականի հունիսի 21-ի սոսկալի հրդեհը եկավ հիմնիվեր խախտելու ինչպես ամբողջ իզմիրահայ համայնքի, իբրև հասարակական միավորի, այնպես էլ Ոսկանյան-անհատի զարգացման պայծառ ուղին:

Հայկական թաղի հրդեհի և նրա կործանարար բնույթի մասին առաջին անգամ տեղեկացրեց «Արշալույս արարատյանը» և ամեն ոք այն դասեց սովորական երևույթների շարքը, մանավանդ որ Թուրքիայի քաղաքներից շատերը և հատկապես Պոլիսն ու Ջմյուռնիան, հնուց անտի հռչակված էին իրենց մեծ հրդեհներով: Սակայն հազիվ մի ամիս անց, իր զգուշավոր ոճին միանգամայն անհարիր համարձակախոսությամբ երկշաբաթաթերթը ծանուցեց, որ արդեն արգելանքի են ենթարկվել երեք հոգի, որոնք նորից կամենում էին հրկիզել Ջմյուռնիայի հայկական թաղը, և որ այդ բոլորը որոշակի դիտումնավորության նախանշաններ է ենթադրում: Չէր անցել վեց ամիս, երբ երրորդ անգամ փորձ արվեց հրկիզել հայկական թաղը (մի քանի տներ, այնուամենայնիվ, այրվեցին) և այս անգամ արդեն կասկած չմնաց, որ տեղի ունեցած աղետը ամենևին էլ պատահական չէր և որ այդ ամենը ենթադրում է որոշակիորեն շահագրգռված անձանց, զուցե և կազմակերպությունների մասնակցությունը:

Երևույթն ըստ էության ըմբռնելու համար ասենք, որ Ջմյուռնիայի՝ բարելոնյան խառնակություն հիշեցնող ազգությունների թվում (հույներ, հրեաներ, ֆրանսիացիներ, արաբներ, իտալացիներ, անգլիացիներ, սլավոններ, թուրքեր և այլն) հայերը, որպես ինքնուրույն միավոր, հանդես եկան ամենից ուշ՝ 1790-ական թվականներից: Եվ այս ժամանակվանից պատմական ասպարեզ իջած հայ ժողովուրդը ոչ միայն կարողացավ աստիճանաբար ու հաստատուն կերպով իր ձեռքը վերցնել քաղաքի ամենակարևոր զարկերակներից մեկը՝ առևտուրը և քաղաքի մյուս կարևոր զարկերակը՝ այժմյան տերմինով ասած՝ վարչա-կառավարական ասլաբատը, աստիճանաբար դուրս մղելով հույներին, որոնք այդ քաղաքի տնօրեններն էին նրա հիմնադրման օրերից, այլև կարողացավ այնպիսի անօրինակ զարգացում ապրել և այդ զարգացումն ապահովելու համար այնպիսի ներքին հնարավորություն դրսևորել, որ չթաքցված զարմանքի բազում բացականչություններ կորզեց իզմիրահայության նրկատմամբ նույնիսկ ոչ այնքան դրականորեն տրամադրված մարդկանցից ու պարբերականներից: Շուրջ հիսուն տարվա իրենց պատմության ընթացքում Ջմյուռնիայի հայերն արդեն ունեին 350 աշակերտով Մեսրոպյան վարժարան, որին Գաբրիել Պատկանյանը անվանեց «Հայկական Աթենք», ունեին Սարգսյան իզական դպրոցը իր 150 աշակերտուհիներով, որի մասին դրվատանքով արտահայտվեց «Մանզարի շարգ» օրաթերթը, ունեին երկու՝ ինքնուրույն ուղղությամբ պարբերականներ («Արշալույս արարատյան» և «Հայրենատեր»), երկու՝ «Արշալույս արարատյանի» և Մեսրոպյան վարժարանի տպարաններ, որոնք, ի դեպ, շարում էին նաև օտար լեզուներով, և, վերջապես, արդեն ձևավորվել ու որպես այդպիսին հանդես էր գալիս իզմիրահայ գրական-գեղարվեստական միտքը: Հայկական համայնքի այսպիսի ներուժ վերելքը, որի ամենաընդհանուր բնութագիրը միայն տվեցինք, չէր կարող իր շարակամ

անդրադարձումը շունենալ Զմյուռնիայում ապրող մյուս ժողովուրդների մոտ, իսկ քանի որ այդ կարգի տրամադրությունները հովանավորում էր քաղաքի թուրք կառավարիչ Համդի պեյը¹¹, ապա արդյունքը պարզ կլինի:

Աղետի հետևանքով նախ՝ իրենց գործունեությունը դադարեցրեցին Մեսրոպյան ու Սարգսյան վարժարանները: Նրանց դասասենյակներում տեղավորվեցին անօթևան մնացած ընտանիքները և, բնականաբար, Ոսկանյան-ուսուցչի գործունեությունը դադարեց: Լրիվ կամ մասնակի այրված 700 տների վերանորոգության համար անհրաժեշտ էր խոշոր գումար գտնել, իսկ քանի որ պատրաստի գումար ուներ միայն «Սյունյաց ընկերությունը», ապա նրանից էլ այն վերցվեց, որն իր հերթին, ընկերության կործանման հիմնական պատճառներից մեկը դարձավ: Հրդեհի հետևանքով, վերջապես, լուծարքի ենթարկվեց աշակերտական «Հայկազնյան ընկերությունը» և, բնականաբար, Ոսկանյանն այստեղ էլ «անգործ մնաց»: Եվ եթե այս բոլորին ավելացնենք, որ Զմյուռնիայից արդեն մեկնել էին նուպարյանները, հետևաբար վերացել էր նրանց հետ պարապելու հարցը, ապա հասկանալի կդառնա հոգեկան-բարոյական այն անելանելի վիճակը, որի մեջ գտնվում էր Ոսկանյանը:

Այս ամենի հետևանքով ծնվեց, թե՛ այս ամենի բնականոն հետևանքը հանդիսացավ Փարիզ ուսումնառության մեկնելու նպատակադրումը, որը, ըստ երևույթին, Ոսկանյանին հրապուրել էր դեռ վաղուց: Ունենալով գրպանում փոքրիկ մի դրամագլուխ (մոտ 30 ոսկի) և քաղաքի մեծերի նամակ-հանձնարարականները Փարիզի այլևայլ նշանավոր անձանց ու կազմակերպություններին, «գրաբերիս հանդեպ ուշադիր ըլլալու» հորդորանքով, Ոսկանյանը 1846 թ. կեսերին թողեց Զմյուռնիան:

НАЧАЛО ЛИТЕРАТУРНО-ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ С. ВОСКАНЯНА

С. А. ШТИКЯН

Резюме

Начало литературно-общественной деятельности С. Восканяна относится к 1843 г., когда он в своем родном городе Измире окончил известную школу «Месропян». Еще в школе при его активном участии было организовано ученическое «Общество Айказян», которое занималось переводом и изданием (отдельными книжками или через газету «Аршалуйс араратян») европейской, в основном французской, классики.

В 1844 г. С. Восканян был избран секретарем армянского научно-политического «Общества Сюняц». В то же время он принимал деятельное участие в литературной жизни Измира: переводил стихи Ламартина и Антуана Арно, басни Лафонтена, написал множество рассказов, одну поэму дидактического характера и т. д., заложив тем самым основы армянского просветительного движения.

¹¹ Բնութագրական է, որ երբ Համդի պեյին հայտնեցին հրդեհի հետևանքով զոհված հայազգիների մասին, վերջինս ցինիկաբար պատասխանեց. «Իսկ էրմենիներին զիս հաշիվո՞վ տված եք, զոր հաշիվով կը պահանջեք ինձմե՞ս («Արևելյան մամուլ», 1905, № 1):